Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Մեդիա» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Ֆասթ Մեդիա» ՍՊԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2-ի վրա, որում նշվում է, որ Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կրել է 3,136,906 հազար ՀՀ դրամի զուտ վնաս և այդ ամսաթվի դրությամբ Ընկերության ընթացիկ

պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ակտիվներին 296,552 հազար ՀՀ դրամով: Ինչպես նշված է Ծանոթագրություն 2-ում, այդ դեպքերն ու իրադարձությունները, Ծանոթագրություն 2-ում սահմանված այլ հարցերի հետ միասին ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը, սույն հանգամանքով պայմանավորված, չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն

դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի ղեկավար

30 ապրիլի 2026թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ ծառայությունների մատուցումից	5	1,339,035	1,116,328
Այլ եկամուտ		15,267	2,844
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,440,191)	(1,699,201)
Հատուցումներ աշխատակիցներին		(1,075,937)	(1,157,344)
Ազդանշանի տրամադրման գծով ծախսեր		(189,271)	(155,262)
Հեռարձակման և բաժանորդագրության գծով ծախսեր		(250,280)	(213,582)
Գործուղման ծախսեր		(30,885)	(59,426)
Առաջխաղացման և գովազդի ծախսեր		(30,621)	(54,100)
Ապահովագրության ծախսեր		(14,608)	(14,096)
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր		(22,757)	(14,908)
Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր		(39,675)	(28,122)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(4,144)	(5,013)
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր		(3,204)	(4,852)
Կարճաժամկետ վարձակալությունների գծով ծախսեր		(2,000)	(2,000)
Բանկային և փոխարկման ծախսեր		(25,439)	(22,114)
Այլ ծախսեր		(48,053)	(31,496)
Գործառնական գործունեությունից վնաս		**(1,822,763)**	**(2,342,344)**
Ֆինանսական եկամուտ		2,054	628
Ֆինանսական ծախս		(493,157)	(301,891)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	6	(585,816)	198,073
Վնաս մինչև հարկումը		**(2,899,682)**	**(2,445,534)**
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	7	(237,224)	110,231
Տարվա վնաս		**(3,136,906)**	**(2,335,303)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(3,136,906)**	**(2,335,303)**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ	8	1,875,238	2,224,291
Ոչ նյութական ակտիվներ	9	244,632	330,851
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	10	34,685	69,370
Հետաձգված հարկային ակտիվներ	11	-	145,155
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	3,140
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,154,555**	**2,772,807**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		861	2,462
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	255,255	257,269
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	238,030	64,378
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**494,146**	**324,109**
Ընդամենը ակտիվներ		**2,648,701**	**3,096,916**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	14		
Կանոնադրական կապիտալ		10,502,010	6,070,010
Լրացուցիչ կապիտալ		1,725,205	2,144,629
Կուտակված վնաս		(13,131,604)	(9,994,698)
Ընդամենը սեփական կապիտալ		**(904,389)**	**(1,780,059)**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Փոխառություններ կապակցված կողմերից	15	2,479,139	3,484,542
Վարձակալության գծով պարտավորություն	10	3,499	37,602
Կոնտենտի ձեռքբերման գծով պարտավորություններ	16	279,754	818,585
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**2,762,392**	**4,340,729**
Ընթացիկ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	244,288	320,064
Կոնտենտի ձեռքբերման գծով պարտավորություններ	16	507,455	176,827
Վարձակալության գծով պարտավորություն	10	38,955	39,355
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**790,698**	**536,246**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**2,648,701**	**3,096,916**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ.-ի ապրիլի 30-ին՝

Նարեկ Գյուլումյան — Քեթրին Գազազյան

Տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Գրանցման ենթակա կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	6,070,010	-	1,340,194	(7,659,395)	(249,191)
Տարվա վնաս	-	-	-	(2,335,303)	(2,335,303)
Հիմնադրից ստացված անտոկոս փոխառություններից օգուտ	-	-	804,435	-	804,435
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**804,435**	**(2,335,303)**	**(1,530,868)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**6,070,010**	**-**	**2,144,629**	**(9,994,698)**	**(1,780,059)**
Տարվա վնաս	-	-	-	(3,136,906)	(3,136,906)
Հիմնադրից ստացված անտոկոս փոխառություններից օգուտ	-	-	(419,424)	-	(419,424)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**(419,424)**	**(3,136,906)**	**(3,556,330)**
Թողարկված բաժնետիրական կապիտալ	-	4,432,000	-	-	4,432,000
Գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**4,432,000**	**-**	**-**	**4,432,000**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**6,070,010**	**4,432,000**	**1,725,205**	**(13,131,604)**	**(904,389)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(3,136,906)	(2,335,303)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,440,191	1,699,201
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ) վնաս	457	2,906
Վարձակալության պարտավորության իրական արժեքի փոփոխություն		121
Ֆինանսական ծախս	493,157	301,891
Շահութահարկի գծով ծախս	237,224	(110,231)
Ֆինանսական եկամուտ	(2,054)	(628)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս	585,816	(198,073)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(382,115)**	**(640,116)**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	2,028	(114,117)
Պաշարների փոփոխություն	1,601	4,800
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(313,369)	240,652
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(691,855)**	**(508,781)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(975,395)	(1,871,513)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	7,844	-
Ստացված տոկոսային եկամուտ	2,054	628
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(965,497)**	**(1,870,885)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	1,865,699	2,314,956
Փոխառությունների մարումներ	(4,432,000)	-
Վարձակալական պարտավորությունների մարում	(41,991)	(38,492)
Կանոնադրական կապիտալի համալրում	4,432,000	-
Ֆինանսավորման գործունեութունից ստացված զուտ դրամական միջոցներ	**1,823,708**	**2,276,464**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	166,356	(103,202)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	7,296	(6,757)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	64,378	174,337
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**238,030**	**64,378**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ֆասթ Մեդիա» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2020թ.-ի դեկտեմբերի 23-ին:

Ընկերության տեսլականն է Հայաստանի Հանրապետությունում ձևավորել սպորտային հեռարձակման նոր մշակույթ՝ հեռուստաալիքների և FastTV.am հարթակի միջոցով հասանելի դարձնելով համաշխարհային սպորտը, և հետաքրքիր ու բազմաժանր տեսալսողական կոնտենտը: Ընկերությունն առաջարկում է Fast TV հոսքային հեռարձակման հարթակը, որտեղ ներկայացված են նաև 700-ից ավելի ֆիլմեր, երեխաների համար նախատեսված բազմալեզու տանայակ աուդիոհեքիաթներ, փաստավավերագրական ֆիլմեր՝ մասնավորապես սպորտային, ինչպես նաև ձեռք է բերել Հայֆիլմի և Մոսֆիլմի ոսկե ֆոնդը:

Ընկերության հիմնական գործունեությունն է.

- սպորտային խաղերի հեռարձակումներ
- տեսալսողական ծրագրերի հեռարձակումների իրավունքի տրամադրում
- գովազդային ծառայությունների մատուցում

Ընկերության բաժնետերեր են հանդիսանում Վահե Բաղալյանը և Վիգեն Բաղալյանը:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2020թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ օրենսդրության համաձայն՝ 273.110.1156278 գրանցման համարով:

Ընկերության գրանցման և հիմնական գործունեության հասցեն է ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 20:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 180 մարդ (2024թ.՝ 196 մարդ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 13,131,604 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31՝ 9,994,698 հազար դրամ), մինչդեռ Ընկերության բաժնետերերի հավաստմամբ՝ վերջիններս շարունակելու են Ընկերության գործունեության ամբողջական և անվերապահ ֆինանսավորումը՝ մինչև այն պահը, երբ Ընկերությունը կապահովի իր անկախ գործունեությունը:

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 13,131,604 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31՝ 9,994,698 հազար դրամ),

մինչդեռ Ընկերության բաժնետերերի հավաստմամբ՝ վերջիններս շարունակելու են Ընկերության գործունեության ամբողջական և անվերապահ ֆինանսավորումը՝ մինչև այն պահը, երբ Ընկերությունը կապահովի իր անկախ գործունեությունը:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
  - ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
  - ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

  Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

  Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

  ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

  Ընկերությունը ներկայումս գնահատում է ՀՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 Եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4 Հասույթ

Ընկերությունը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ ստանում է 3 աղբյուրներից.

- Նկարահանման և գովազդային ծառայությունների մատուցումից,
- Տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրումից,
- Բաժանորդագրային վճարներից:

Ընկերությունն իր հասույթը ճանաչելիս առաջնորդվում է ՖՀՄՍ 15-ի՝ «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», պահանջներով, որը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման համար (երբ և ինչ գումարով պետք է ճանաչվի հասույթը): Համաձայն ՖՀՄՍ 15-ի՝ հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը «ժամանակի կոնկրետ պահին», թե «ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Գովազդային ծառայությունների մատուցում

Այս հասույթն առաջանում է Ընկերության կողմից հեռուստատեսային և առցանց հարթակների մեջ գովազդային ժամանակի տրամադրումից: Հասույթը ճանաչվում է այն պահից, երբ գովազդը փաստացի հրապարակվել կամ հեռարձակվել է, ինչը համարվում է կատարողականի պարտավորության ամբողջական կատարում: Եթե ծառայությունը կատարվում է շարունակական հիմքով՝ բազմակի ցուցադրություններից, ապա հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայության մատուցման ընթացքում:

Բովանդակության վաճառք և լիցենզավորում

Այս հասույթն առաջանում է Ընկերության կողմից ստեղծված բովանդակության վերահաղորդման իրավունքը այլ կազմակերպությունների կամ հարթակների վաճառելու արդյունքում: Այն դեպքում, երբ հաճախորդը ստանում է բովանդակությունը մեկանգամյա օգտագործման նպատակով՝ հասույթը ճանաչվում է ժամանակի կոնկրետ պահին: Շարունակական մուտքի դեպքում՝ ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետի:

Բաժանորդագրային ծառայություններ

Այս հասույթն առաջանում է Ընկերության կողմից տրամադրվող առցանց հարթակների հասանելիության վճարովի բաժանորդագրություններից: Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում բաժանորդագրության ամբողջ ընթացքում:

4.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է Ընկերության կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

Ընկերության կողմից գնված ֆիլմերը, լիցենզիաները և հաղորդումները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, եթե բավարարում են ոչ նյութական ակտիվի ճանաչման պահանջները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում հետևյալ կերպ.

- Ֆիլմերն ամորտիզացվում են 1-ից 10 տարվա ընթացքում՝ կախված դրանց յուրահատկություններից և պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Սպորտային և այլ հաղորդումների հեռարձակման գծով ստացված օտարերկրյա լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Համակարգչային ծրագրերն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:

4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենա-սարքավորումներ	-	1-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	8 տարի

Արտադրական, տնտեսական գույք	-	5-8 տարի
Վարձակալված տարածքի բարելավում	-	Վարձակալության ժամկետում
Այլ	-	1-8 տարի:

4.7 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր գրասենյակային համար: Գրասենյակային տարածքների գծով վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում են անորոշ ժամկետով, իսկ որոշակի ժամկետով կնքված լինելու դեպքում ունեն երկարաձգման պայմաններ: Ընկերությունը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով և պարունակում են տարբեր պայմաններ:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները

վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

4.8 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.9 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը գործարքներ է կնքում միայն հիմնական ֆինանսական գործիքներով, որոնք հանգեցնում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, ինչպիսիք են՝ առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, բանկային միջոցները և վարձակալության գծով պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են սկզբնական արժեքով և ամորտիզացված արժեքով, գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արժեզրկման օբյեկտիվ ապացույցների դեպքում: Եթե հայտնաբերվում են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ, արժեզրկումից կորուստը ճանաչվում է Ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն: Եթե ֆինանսական ակտիվն ունի փոփոխական տոկոսադրույք, ապա արժեզրկումից կորուստը չափելու համար զեղչման տոկոսադրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է Ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և կա մտադրություն զուտ հիմունքներով մարել կամ ակտիվն իրացնել և պարտավորությունը միաժամանակ մարել:

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն

պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և առևտրային կրեդիտորական պարտքերը և վարձակալության գծով պարտավորությունները:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և վարձակալության գծով պարտավորությունները: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տոկոսավճարները ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.10 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.12 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.14 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը:

Կուտակված վնասը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված արդյունքը:

Լրացուցիչ կապիտալը ներառում է կապակցված կողմից ստացված փոխառությունների սկզբնական ճանաչման պահին իրական և անվանական արժեքների միջև առկա դրական տարբերությունը;

Բաժնետերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

4.15 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

4.16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված նշանակալի դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

4.16.2 Գնահատման անորոշություն

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունն օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս Ծանոթագրություն 24):

5 Հասույթ ծառայությունների մատուցումից

	2025թ.	2024թ.
Նկարահանման և գովազդի ծառայություններից	1,116,037	947,801
Ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրումից	133,889	110,505
Բաժանորդագրություններից	89,109	58,022
Ընդամենը	**1,339,035**	**1,116,328**

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Ժամանակի որևէ պահին փոխանցվող ծառայություններ	1,116,037	947,801
Ժամանակի ընթացքում փոխանցվող ծառայություններ	222,998	168,527
Ընդամենը	**1,339,035**	**1,116,328**

6 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	14	70
Մնացորդներ բանկերում	7,296	(6,757)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ	(681,726)	206,189
Առևտրային կրեդիտորական պարտքեր	88,600	(1,429)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	**(585,816)**	**198,073**

7 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 11)	237,224	(110,231)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**237,224**	**(110,231)**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների)	(2,899,682)		(2,445,534)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	(521,943)	18.0%	(440,196)	18.0%
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	759,167	(26.2)%	329,965	(13.5)%
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**237,224**	(0.1)%	(110,231)	4.5%

8 Հիմնական միջոցներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	Մեքենա-սարքա-վորումներ	Տրանս-պորտային միջոցներ	Արտադրա-տնտեսա-կան գույք	Կոնտենտի գծով կապիտալացված ծախսումներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	988,065	84,530	74,450	3,947,616	433,783	5,528,444
Ավելացում	28,665	-	3,058	1,477,272	11,362	1,520,357
Օտարում	(3,207)	-	-	(2,864,575)	(1,124)	(2,868,906)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,013,523**	**84,530**	**77,508**	**2,560,313**	**444,021**	**4,179,895**
Ավելացում	6,071	62	182	666,842	4,803	677,960
Օտարում	(1,667)	(11,142)	(741)	(1,083,041)	(142)	(1,096,733)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,017,927**	**73,450**	**76,949**	**2,144,114**	**448,682**	**3,761,122**
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**481,978**	**11,469**	**17,426**	**2,949,614**	**98,634**	**3,559,121**
Տարվա հաշվարկ	199,935	10,603	9,606	988,801	54,516	1,263,461
Օտարման հետևանքով դուրսգրում	(2,350)	-	-	(2,864,575)	(53)	(2,866,978)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**679,563**	**22,072**	**27,032**	**1,073,840**	**153,097**	**1,955,604**
Տարվա հաշվարկ	126,484	10,170	9,888	815,945	56,163	1,018,650
Օտարման հետևանքով դուրսգրում	(1,473)	(3,442)	(366)	(1,083,041)	(48)	(1,088,370)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**804,574**	**28,800**	**36,554**	**806,744**	**209,212**	**1,885,884**
Հաշվեկշռային արժեք						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**333,960**	**62,458**	**50,476**	**1,486,473**	**290,924**	**2,224,291**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**213,353**	**44,650**	**40,395**	**1,337,370**	**239,470**	**1,875,238**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի: Մաշվածության գծով ամբողջ ծախսը ներառվել է շահույթում կամ վնասում:

9 Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, ֆիրմային անուն-ներ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	140,777	493,912	634,689
Ավելացում	4,329	348,678	353,007
Օտարում	(5,733)	(347,346)	(353,079)
Ներքին շարժ	599	(599)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**139,972**	**494,645**	**634,617**
Ավելացում	-	300,637	300,637
Օտարում	(63,608)	(318,055)	(381,663)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**76,364**	**477,227**	**553,591**
Կուտակված ամորտիզացիա			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	88,074	166,617	254,691
Տարվա հաշվարկ	33,528	367,526	401,054
Օտարման հետևանքով դուրսգրում	(5,710)	(346,269)	(351,979)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**115,892**	**187,874**	**303,766**
Տարվա հաշվարկ	14,325	372,531	386,856
Օտարման հետևանքով դուրսգրում	(63,608)	(318,055)	(381,663)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**66,609**	**242,350**	**308,959**
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24,080**	**306,771**	**330,851**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,755**	**234,877**	**244,632**

10 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալություն

Ընկերությունն ունի վարձակալված գրասենյակային տարածք: Բացառությամբ կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Գրասենյակային տարածք	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	103,934	103,934
Ավելացում	122	122

	Գրասենյակային տարածք	Ընդամենը
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**104,056**	**104,056**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**104,056**	**104,056**
Կուտակված մաշվածություն		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա հաշվարկ	34,686	34,686
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,686**	**34,686**
Տարվա հաշվարկ	34,685	34,685
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**69,371**	**69,371**
Հաշվեկշռային արժեք		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**69,370**	**69,370**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,685**	**34,685**

Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ: Մաշվածության գծով ամբողջ ծախսը ներառվել է շահույթում կամ վնասում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ	3,499	37,602
Ընթացիկ	38,955	39,355
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**42,454**	**76,957**

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է վարձակալված գրասենյակային տարածքում: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից (ինչպիսիք են, օրինակ, Ընկերության վաճառքների ծավալի հիման վրա հաշվարկվող վարձավճարները), բացառվում են վարձակալության գծով պարտավորության և ակտիվի սկզբնական չափումից: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 8-ը):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվն այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Ընկերությանն արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել: Վարձակալված գրասենյակային տարածքը Ընկերությունը պետք է պահպանի բարեկարգ վիճակում և վարձակալության վերջում գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով: Հաշվետու ամսաթվի դրությամբ ղեկավարությունը դեռ չի կատարել ժամկետի երկարացման վերաբերյալ գնահատում և չի վերաչափել օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորության արժեքները:

11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	145,155	211,507
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս) փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 7)	(237,224)	110,231
(Դեբետագրված) կրեդիտագրված սեփական կապիտալում	92,069	(176,583)
Տարեվերջի մնացորդ	**-**	**145,155**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Վարձակալության գծով պարտքեր	13,852	(6,210)	-	7,642
Կուտակված վնաս	713,367	(297,648)	-	415,719
Առևտրային կրեդիտորական պարտքեր	107,934	(62,493)	-	45,441
	835,153	**(366,351)**	**-**	**468,802**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	271,333	(30,606)	-	240,727
Փոխառություններ	406,178	(92,277)	(92,069)	221,832
Օգտագործման իրավունքով ակտիվներ	12,487	(6,244)	-	6,243
	686,665	**(129,127)**	**(92,069)**	**468,802**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**145,155**	**(237,224)**	**92,069**	**-**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Վարձակալության գծով պարտքեր	18,708	(4,856)	-	13,852
Կուտակված վնաս	566,212	147,155	-	713,367
Առևտրային կրեդիտորական պարտքեր	132,737	(24,803)	-	107,934
	717,657	**117,496**	**-**	**835,153**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	189,094	82,239	-	271,333
Փոխառություններ	298,348	(68,753)	176,583	406,178
Օգտագործման իրավունքով ակտիվներ	18,708	(6,221)	-	12,487
	506,150	**7,265**	**-**	**686,665**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**211,507**	**110,231**	**(176,583)**	**145,155**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	238,715	252,720
Այլ դեբիտորական պարտքեր	-	773
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**238,715**	**253,493**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	12,283	2,407
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	4,257	1,369
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**16,540**	**3,776**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**255,255**	**257,269**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 65 օր (2024թ.՝ 80 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տե՛ս Ծանոթագրություն 23.1՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	236,940	13,748
Բանկային հաշիվներ Եվրոյով	11	47,911
Բանկային հաշիվներ ԱՄՆ դոլարով	1,079	2,719
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**238,030**	**64,378**

14 Սեփական կապիտալ

14.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերությունն ունի 2 սովորական բաժնեմաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

2025թ. դեկտեմբերի 1-ին Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշմամբ Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվել է 5,000,000 հազար ՀՀ դրամով, որից հաշվետու ամսաթվի դրությամբ փաստացի համալրվել է 4,432,000 հազար ՀՀ դրամը: 568,000 ՀՀ դրամը համալրվել է 2026թ. փետրվարին, որից հետո իրավաբանական անձանց պետական գրանսամատյանում կատարվել է կանոնադրական կապիտալի ավելացման մասին գրանցումը: Ավելացված կանոնադրական կապիտալը Ընկերության բաժնետերերի միջև բաշխվել է հավասարապես:

Տեղաբաշխման արդյունքում յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժնետոմսերի հարաբերակցությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է.

Բաժնետիրոջ անուն	Բաժնեմասի չափ	Բաժնեմասի անվանական արժեք (ՀՀ դրամ)	Որից գրանցման ենթակա բաժնեմասի արժեք (ՀՀ դրամ)
Վահե Բադալյան	50%	5,251,005	2,216,000
Վիգեն Բադալյան	50%	5,251,005	2,216,000

14.2 Լրացուցիչ կապիտալ

Ընկերությունը 2023թ.-ից սկսած իր բնականոն գործունեությունը ֆինանսավորելու նպատակով պարբերաբար ստանում է անտոկոս երկարաժամկետ փոխառություններ իր բաժնետերերի համատեղ վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունից: Այդ փոխառությունների սկզբնական ճանաչման պահին իրական և անվանական արժեքների միջև առկա դրական տարբերությունը վերադասակարգվում է որպես լրացուցիչ կապիտալ: Հաշվետու տարում Ընկերությունը կատարել է փոխառությունների գծով մարումներ, որից հետո լրացուցիչ կապիտալը վերաչափվել է:

15 Փոխառություններ կապակցված կողմերից

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	-	-	2,479,139	3,484,542
Ընդամենը փոխառություններ	**-**	**-**	**2,479,139**	**3,484,542**

Ոչ ընթացիկ փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	2,479,139	3,484,542	3,711,536	5,741,086
	2,479,139	**3,484,542**	**3,711,536**	**5,741,086**

Իրական արժեքը հաշվարկվում է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 8.4% տոկոսադրույքով արտարժույթով փոխառությունների դեպքում (2024թ.՝ 8.5% տոկոսադրույքով արտարժույթով և 12.5% տոկոսադրույքով դրամային փոխառությունների դեպքում):

Ընկերության տոկոսային և արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

16 Կոնտենտի գծով պարտավորություններ

Ընկերությունն ունի կնքված երկարաժամկետ պայմանագիր միջազգային սպորտային առաջնությունների կոնտենտի հեռարձակման իրավունքի ձեռքբերման համար, ըստ որի ձեռք է բերել իրավունք՝ օգտագործելու բացառիկ բովանդակություն որոշակի ժամանակահատվածի ընթացքում՝ 4 տարի ժամկետով մինչև 2027թ. հունիս վավերականությամբ: Պայմանագրի շրջանակում Ընկերությունը պարտավորվում է կատարել պարբերական վճարումներ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Ընկերությունն այս պարտավորությունները դասակարգում է որպես ֆինանսական պարտավորություններ և ճանաչում է որպես «Կոնտենտի ձեռքբերման գծով պարտավորություններ»: Քանի որ պարտավորության կատարումը տարածված է մի քանի հաշվետու ժամանակաշրջանների վրա, այն դասակարգվում է որպես երկարաժամկետ պարտավորություն:

Կոնտենտի ձեռքբերման գծով պարտավորությունների բաշխումը ներկայացվում է հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Պայմանագրով վճարման ենթակա գումար	858,060	1,189,680
Զեղչման ազդեցություն	(70,851)	(194,268)
Ամորտիզացված արժեքով պարտավորություն	**787,209**	**995,412**

Պարտավորությունը դասակարագվում է ընթացիկ և ոչ ընթացիկ՝ ըստ պայմանագրով սահմանված ժամանակացույցի հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ	279,754	818,585
Ընթացիկ	507,455	176,827
	787,209	**995,412**

Լիցենզիայի արժեքը չի համարվում պայմանագրային պարտավորություն ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի իմաստով, քանի որ այն չի վերաբերում Ընկերության կողմից կատարման պարտավորությանը, այլ դիտարկվում է որպես ֆինանսական գործիք՝ ըստ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի:

17 Առևտրային և կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	81,829	148,078
Աշխատակիցների գծով պարտավորություններ	96,402	103,352
Ստացված կանխավճարներ	2,465	-
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	63,425	68,544
Այլ	167	90
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**244,288**	**320,064**

Ծառայությունների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 80 օր (2024թ.՝ 90 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

18 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Երկարաժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,122,557	103,934	2,226,491
Դրամային հոսքերից			
Ավելացում	2,314,956	-	2,314,956
Մարումներ	-	(38,492)	(38,492)
Ոչ դրամային հոսքերից			
Իրական արժեք	(981,018)	121	(980,897)
Տոկոսի հաշվեգրում	234,236	11,394	245,630
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(206,189)	-	(206,189)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,484,542**	**76,957**	**3,561,499**
Դրամային հոսքերից			
Ավելացում	1,865,699		1,865,699
Մարումներ	(4,432,000)	(41,991)	(4,473,991)
Ոչ դրամային հոսքերից			
Իրական արժեք	511,493	-	511,493
Տոկոսի հաշվեգրում	367,679	7,488	375,167
Փոխարժեքային տարբերությունից վնաս	681,726	-	681,726
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,479,139**	**42,454**	**2,521,593**

19 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են բաժնետերերի ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները և հիմնական ղեկավար անձնակազմը:

19.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետերերի կողմից:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ և բաժնետերեր		
Ծառայությունների մատուցում	822,313	933,288
Ստացված ծառայություններ	637	35,671

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Ստացված փոխառություններ	1,865,699	2,314,956
Մարված փոխառություններ	4,432,000	-
Վարձակալության գծով ծախսեր	50,390	50,390

Մնացորդներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	125,795	124,031
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,478	2,359
Վարձակալության գծով պարտավորություններ	4,199	4,199

19.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Գործարքներ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	21,439	30,989

Մնացորդներ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Աշխատավարձ և արձակուրդային պահուստ	53	6,653

20 Իրավական պարտավորվածություններ

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում կամ այլ հայցերում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա և որոնք չեն հաշվեգրվել կամ չեն բացահայտվել այս ֆինանսական հաշվետվություններում:

21 Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշ հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- Գործարքներ կապակցված կողմերի միջև,
- Գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- Կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

22 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.9-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր [1]	238,715	253,493
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	238,030	64,378
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**476,745**	**317,871**

[1] այս գումարներն արտացոլում են միայն առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, որոնք հանդիսանում են ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություններ	77,910	76,957
Փոխառություններ	2,479,139	3,484,542
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	912,477	1,173,709
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**3,469,526**	**4,735,208**

23 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

23.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից և փոխառություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված	Եվրո	ԱՄՆ դոլար
31 դեկտեմբերի 2025թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,147	1,282
Բանկային մնացորդներ	11	1,079
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**3,158**	**2,361**
Ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ կապակցված կողմերից	2,479,139	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	22,406	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**2,501,545**	**-**
Զուտ արդյունք	**(2,498,387)**	**2,361**

Հոդված	Եվրո	ԱՄՆ դոլար
31 դեկտեմբերի 2024թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,723	-
Բանկային մնացորդներ	47,911	2,719
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**52,634**	**2,719**
Ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ կապակցված կողմերից	3,264,536	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	15,890	409
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**3,280,426**	**409**
Զուտ արդյունք	**(3,227,792)**	**2,310**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ Եվրոյի և ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 5% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 5%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով (2024թ.՝ 10%):

Դրամի արժևորումն Եվրոյի և ԱՄՆ դոլարի նկատմամբ 5%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը՝

	Եվրոյի ազդեցություն		ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	124,919	322,779	(118)	(231)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

23.2 Տոկոսադրույքային ռիսկի վերլուծություն

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի փոխառու միջոցներ:

Պայմանագրերն անտոկոս են, արդյունավետ տոկոսադրույքը կազմել է 8.4% արտարժույթով փոխառությունների համար և 12.9% վարձակալության պարտավորության համար:

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 3%-ի փոփոխության համար: 3%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 3% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության՝

- 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր/ կաճեր 14,795 հազար ՀՀ դրամով (2024թ.՝ կնվազեր/ կաճեր 9,057 հազար ՀՀ դրամով),

Ընկերության զգայունությունը տոկոսադրույքի աճի/նվազման նկատմամբ հիմնականում կախված է փոխառություններից և վարձակալության պայմանագրերից:

23.3 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է մնացորդները տարբեր և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի ժամկետները տատանվում են 3-ից 70 օրերի միջև:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 365 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

23.4 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով

ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2025թ.	Անտոկոս	Փոխառություններ կապակցված կողմերից	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		8.4%	12.9%	
Մինչև 6 ամիս	462,026	-	20,996	483,022
6 ամսից մինչև 1 տարի	336,758	-	20,996	357,754
1-5 տարի	336,758	3,711,536	3,499	4,051,793
	1,135,542	**3,711,536**	**45,491**	**4,892,569**

2024թ.	Անտոկոս	Փոխառություններ կապակցված կողմերից	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		8.5%, 12.5%	12.9%	
Մինչև 6 ամիս	178,297	-	20,996	199,293
6 ամսից մինչև 1 տարի	310,418	-	20,996	331,414
1-5 տարի	931,253	5,741,086	45,491	6,717,830
	1,419,968	**5,741,086**	**87,483**	**7,248,537**

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1-3 ամիսների ընթացքում:

24 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է, որը կազմել է միջինում 12.9% (2024թ.՝ 12.9%):

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններից ստացված փոխառությունները տրամադրվել են 8 տարի ժամկետով և անտոկոս են: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 8.5% տոկոսադրույքով արտարժույթով փոխառությունների և 12.5% դրամային փոխառությունների դեպքում: Տոկոսադրույքը որոշվել է ելնելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված վիճակագրական տվյալներից: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Ընկերության ֆինանսկան գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

25 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են կապակցված կողմերից ստացված փոխառությունները, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 15-ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ պարտք		
Փոխառություններ	2,479,139	3,484,542
Հանած՝ ստորադաս վարկ	2,479,139	3,484,542
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	238,030	64,378
	238,030	**64,378**
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	(669,599)	(1,780,059)
Գումարած՝ ստորադաս վարկ	2,479,139	3,484,542
	1,809,540	**1,704,483**
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	**13%**	**4%**

Փոփոխությունը պայմանավորված է կանոնադրական կապիտալի համալրմամբ, փոխառությունների մարումներով և ընթացիկ տարվա վնասով: